

# ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

## ԵՐԿՐԻ ԻՄԻՋԻ ԿԱՌՈՒՅԱԿՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### ՆՎԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ժամանակակից աշխարհում տնտեսական և քաղաքական դաշտում ծավալվող գլոբալիզացիոն գործընթացներն ուղեկցվում են նաև միջազգային հարաբերություններում իմիջային գործոնի ուժեղացմամբ: Այսօր խիստ կարևորվում և պետական նշանակություն են ստանում քաղաքական իմիջային հարորդակցությունն ու դրա ընթացքում իրականացվող տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունը:

Երկրի իմիջով են պայմանավորված տվյալ պետության վարկը, նրա նկատմամբ այլ երկրների վարքը. օրինակ՝ Երկրի հանդեպ հնարավոր վարկատուների և ներդրողների վստահությունը, կարևորագույն քաղաքական և տնտեսական հարցեր լուծելու համար բարենպաստ նթնոլորտի ձևավորումը, աշխարհի երկրների հետ փոխազդեցության ձևերի և ուղղվածությունների որոշումը: Բարենպաստ իմիջի միջոցով ձևավորվում են ազգային շահերի սահմանումն ու ամրապնդումը:

Երկրի դրական իմիջի ձևավորումն ունի ոչ միայն միջազգային, այլև ներազգային նշանակություն: Այն սոցիալականացնող ու դաստիարակչական լուրջ դեր է խաղում քաղաքացիների և առաջին հերթին հասունացող սերնդի համար: Դրական իմիջը մեծապես որոշում է հայրենասիրության մակարդակը, երկրի հանդեպ հարգանքը, պետության հետ քաղաքացիների նույնականացման ձգումը:

Այսպիսով, **երկրի իմիջը** հասարակության անդամների, քաղաքացիների կամ միջազգային համրության պատկերացումների անբողջությունն է այն մասին, թե ինչպիսին է տվյալ երկրը:

Տուրիզմի միջազգային կազմակերպության սահմանման համաձայն՝ երկրի իմիջը ռացիոնալ և էնոցիոնալ (զգայական) պատկերացումների անբողջություն է, որը ձևավորվում է նշված երկրի բոլոր բնութագրիչների համադրությունից: Այս գործոնով է պայմանավորվում այն, որ երկրի անվան պարզ հիշատակումն անգամ կարող է նշված երկրի վերաբերյալ գուգորդությունների ամբողջական շղթայի կառուցակցման հնարավորություն ստեղծել<sup>1</sup>:

Երկրի իմիջն ունի բավական բարդ կառուցվածք. այն ներառում է պատմամշակութային տարրեր նշանակություններ և դրանով իսկ առավել անբողջական պատկերացում տալիս երկրի իշխանության, քանակի, արտաքին քաղաքականության և պետության կենսագործունեության այլ ոլորտների վերաբերյալ:

<sup>1</sup> Տես Պանկրուխին Ա. Ա. Մարքետինգ. Ստուդիո. 2003, էջ 561:

Երկրի իմիջի կարևորագույն տարրը **քաղաքական համակարգն** է իր բոլոր ինստիտուտներով և առաջին հերթին՝ **իշխանական ինստիտուտներով**<sup>2</sup>: Յայտնի է, որ **իշխանությունը և հասարակությունը** պետական քաղաքական համակարգի անբաժանելի բաղադրիչներն են, որոնք առանց մեկը մյուսի չեն կարող գոյություն ունենալ: Այդուհանդեռձ, անհնար է չնկատել, որ Երկրի իմիջն ուղղակիորեն պայմանավորված է հատկապես իշխանությունների և նրա ներկայացուցիչների ծևավորած կերպարով: Ընդ որում, տնտեսական հասարակարգի տիպով, ինչպես նաև պետության քաղաքական կառույցի տեսակով՝ իշխանավորների անձի և Երկրի իմիջի միջև կապը կարող է տարբեր լինել: Օրինակ՝ կայացած ժողովրդավարություն ունեցող Երկրների դեպում նման ազդեցությունը ավելի պակաս է (օրինակ՝ Նորվեգիա, Շվեդիա), քան այն պետությունների, որոնք չունեն բավարար ժողովրդավարական ավանդույթներ կամ ունեն կառավարման ավտորիտար համակարգ (Լիբանան, Եգիպտոս, Կուրսա):

Երկրի ամբողջական իմիջը հաճախ կարող է պարզապես նույնացվել իշխանությունների իմիջի հետ: Դա վկայում է այն մասին, որ հարկավոր է լուրջ ուշադրություն դարձնել իշխանության դրական իմիջի ծևավորման վրա: Այսօր հաճախ են անդրադառնում իշխանության լեգիտիմության հիմնախնդրին, որը ներառում է Երկու քաղադրիչ՝ հասարակության (կամ նրա մեծամասնության) կարծիքը տվյալ իշխանության օրինականության վերաբերյալ և կառավարողների կողմից իրենց իշխանական իրավասության գիտակցումը: Այն իշխանությունները, որոնք հետևում են «խաղի կանոններին», բնակչության կողմից ընդունվում են որպես լեգիտիմ, ինչը նշանակում է, որ քաղաքացիները պատրաստակամ են աջակցելու նրանց՝ առանց հարկադրանքի՝ կամավոր:

Այսպիսով, իշխանության իմիջը պետության և հասարակության, կառավարման ապարատի և քաղաքացիների միջև սոցիալական հակասությունների արտահայտնան ծև է. որքան սուր են այդ հակասությունները, այնքան քացասական է իշխանության կերպարը, հետևաբար նաև՝ Երկրի իմիջը:

Քաղաքական համակարգի հաջորդ կառուցվածքային տարրը, որ էապես ազդում է Երկրի իմիջի վրա, **քաղաքական լիդերներն են, նրանց իմիջը**: Յաճախ, եթե ԶԼՄ-ները փորձում են խոսել որոշ Երկրների բացասական կամ դրական իմիջի մասին, նրանք նախ և առաջ անդրադառնում են տվյալ Երկրի քաղաքական առաջնորդների իմիջին և հակառակը<sup>3</sup>:

Երկրի իմիջի մյուս բաղադրիչը **տնտեսական համակարգն** է: Տնտեսական գործոնը նույնպես նեծ նշանակություն ունի և կարող է էական ազդեցություն գործել Երկրի թե՛ ներքին և թե՛ արտաքին իմիջի վրա<sup>4</sup>: Յայտնի է, որ տնտեսական համակարգը ցանկացած հասարակության զարգացման հիմքն է և կարող է պայմանավորել հասարակական կյանքի այլ ոլորտները (քաղաքական, մշակութային, հոգևոր և այլն): Երկրի սոցիալ-տնտեսական իմիջը բնութագրվում է նրա բարեկեցության համալիր ցու-

<sup>2</sup> Տես Գալումով Է. Իմидж страны и власть. М., 2003, էջ 10:

<sup>3</sup> Տես նույն տեղը:

<sup>4</sup> Տես Կաշլев Յ., Գալումով Է. Информация и PR в международных отношениях. М., 2003, էջ 297:

ցանիշի միջոցով: Դա որոշելու համար կիրառվում են հետևյալ 4 հիմնական ցուցանիշները (ինդեքսները՝ յուրաքանչյուր շնչի հաշվով ՀՆԱ-ն և բնակչության ապահովվածությունը, արտադրական ռեսուրսները (իհմնական ֆոնդեր, ճանապարհներ, կառույցներ), բնական և մարդկային ռեսուրսները (օրինակ՝ կրթության մակարդակը):

Երկրի տնտեսական համակարգի զարգացման աստիճանը հաճախ անդրադառնում է տվյալ երկրի մրցունակության մակարդակի վրա:

Ս. Պորտերը պետության մրցունակության պայման է համարում արտադրողականությունը, որն ընկալվում է որպես կապիտալի և աշխատուժի արդյունավետ օգտագործում, և որի արդյունքն է բնակչության մեկ շնչին հասնող ազգային եկամտի մեծության չափը:

Երկրների մրցակցային առավելությունները պայմանավորող հիմնական գործոններն են.

➤ Գործոնային պայմաններ՝ մարդկային և բնական ռեսուրսները, գիտատեղեկատվական ներուժը, կապիտալը, ենթակառուցվածքները, ինչպես նաև կյանքի որակը պայմանավորող գործոնները:

➤ Ներքին պահանջարկի պայմաններ՝ պահանջարկի որակը, միջազգային շուկայի պահանջարկի զարգացման միտուներին համապատասխանությունը, պահանջարկի ծավալի զարգացումը:

➤ Զարակից և ծառայող ճյուղերը՝ հումքի ներմուծման ոլորտները, սարքավորումների ներմուծման ոլորտները, հումքի, սարքավորումների, տեխնոլոգիաների կիրառման ոլորտները:

➤ Կազմակերպությունների ռազմավարությունը և կառուցվածքը, ներճյուղային մրցակցությունը՝ նպատակները, ռազմավարությունները, կազմակերպման միջոցները, ֆիրմաների մենեջմենթը, ներճյուղային մրցակցությունը<sup>5</sup>:

Երկրի մրցունակությունը նախ և առաջ ազդում է **Երկրի գործնական իմիջի** վրա, որն էլ, իր հերթին, հիմք է դառնում երկրի ներդրումային գրավչության համար: Երկրների ներդրումային գրավչության գործոնները ներկայացնենք աղյուսակով.

### **Երկրների ներդրումային գրավչության գործոնները**

Գործոններ	Ցուցանիշներ
Տնտեսական աճի մակարդակը	Համախառն ներքին արդյունքի աճ
Շուկայի ծավալները	Համախառն ներքին արդյունքն ըստ շնչի և բնակչության քանակը
Քաղաքական կայունություն	Երկրում գտնվելու անձնական վտանգը և պետական հեղաշրջումները վերջին 10 տարիներին
Արտասահմանյան օգնությունից կախվածությունը	Ոչ ազատ տնտեսության ցուցանիշ, ռեֆորմների արգելակում, զարգացման հեռանկարների բացակայություն
Արտաքին պարտքի չափերը	Փոխառու միջոցների կառուցվածքային ուղղվածությունը

<sup>5</sup> Стю Порттер М. Международная конкуренция. М., 1993:

<b>Գործոններ</b>	<b>Ցուցանիշներ</b>
Արժույթի կոնվերտացումը	Արժույթի արտաքին կոնվերտացնան ազատություն և շահույթի հայրենադարձության հնարավորություն
Արժույթի ուժը	Արժույթի ինֆլացիոն կայունություն (աշխարհի առաջավոր արժույթների զամբյուղի համար SDR)
Ներքին կուտակումների մակարդակը	ՀՆԱ-ի և սպառման միջև տարբերությունը օպտիմալ է ՀՆԱ-ից 24 տոկոսը, տարեկան տալիս է 4-5 տոկոս ՀՆԱ-ի աճ
Ենթակառուցվածքների զարգացման մակարդակը	ճանապարհներով, եներգիայով, կոմունիկացիաներով ապահովվածությունը և դրանց առկայության համաշափությունը

Երկրի իմիջի վրա ազդում է նաև հասարակության **մշակութային անցյալը՝** արժեքները, սովորույթները, պահանջումները, պատմական իրադարձությունները, որոնք ուղղորդել են տվյալ հասարակության զարգացման ընթացքը, ինչպես նաև մշակութային ողջ ժառանգությունը, որ պահպանվել է տվյալ պետության սահմաններում<sup>6</sup>:

Երկրի իմիջի կարևոր տարր է նաև **արտապետական իմիջը**, որը պայմանավորված է այդ երկրի պատմական և ներկայիս միջազգային կապերի բնույթով, միջազգային հարաբերությունների հաստատման նախապատվություններով, բարեկամական և թշնամական հարաբերություններով<sup>7</sup>:

Երկրի իմիջի արդեն նկարագրված բնույթից բխում է նրա տիպաբանման տրամաբանությունը. ըստ ազդեցության ուղղվածության՝ իմիջը լինում է **ներքին և արտաքին:** Երկրի ներքին իմիջը դրա մասին քաղաքացիների, նրանց խնբավորումների պատկերացումներն են: Իսկ արտաքին իմիջը տվյալ երկրի «պատկերն» է արտերկրյա հանրության աչքում:

Արտերկրներում տվյալ երկրի իմիջի հիմնական հաղորդիչներ են միջազգային ոլորտների սուբյեկտները՝ դիվանագիտական, արտաքին ֆինանսատնտեսական գործունեության, տուրիզմի, տրանսպորտի, հյուրանոցային բիզնեսի բնագավառները:

Արտաքին և ներքին իմիջները սերտորեն փոխկապակցված են և ներազդում են մինյանց վրա: Օրինակ՝ եթե սոցիոլոգիական հետազոտության արդյունքում պարզվի, որ երկրի արտաքին իմիջը բացասական է, այդ տեղեկատվությունը, բնականաբար, բացասաբար կանդրադառնաներում՝ հասարակության անդամների մտածողության ու վարքի վրա. կարող է առաջանալ անվստահության մթնոլորտ: Նմանապես ներքին բացասական կամ դրական իմիջը հաճախ նպաստում է նույնպիսի արտաքին իմիջի ձևավորմանը:

Երկրի իմիջի ձևավորման ուղղված գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է երկրի ներսում և երկրից դուրս

<sup>6</sup> Տես Կաշլեվ ՅՈ., Գալումօվ Է. նշՎ. աշխ., էջ 275:

<sup>7</sup> Տես Иванов И. С. Внешняя политика России в эпоху глобализации. М., 2002, էջ 189:

շրջանառվող տեղեկատվական հոսքերի կազմակերպման և կառավարման գործընթացներով:

Բնական է, որ նշված երկի բնակչություններին, քան այլ երկրների բնակչությունը Սակայն քիչ չեն դեպքերը, երբ մեր մասին մեր գիտելիքներն ու հույզերը վերագրում ենք նաև ուղիղներին:

**Սուրյեկտիվ կամ հայելային իմիջը** երկի բնակչությունների և հատկապես իշխանությունների պատկերացումն է այն մասին, թե ինչպես է իրենց երկիրն ընկալվում արտերկոռում:

Այստեղ կարևոր այն է, որ այդ պատկերացումները լինեն համարժեք և իրատեսական, ինչի համար անհրաժեշտ է պարբերաբար ուսումնասիրել այլ երկրներում տվյալ պետության շուրջ ձևավորված հասարակական դիսկուլսը, իրականացնել այդ երկի վերաբերյալ օտարերկրյա մամուլի հրապարակումների, հեռուստա- և ռադիոհաղորդումների վերլուծություն: Դակառակ դեպքում տեղեկատվության պակասը կամ բացակայությունը կարող է հանգեցնել արտաքին քաղաքականության սխալների՝ հիմքում ունենալով ոչ թե օտարազգինների ընկալումների օբյեկտիվ գնահատականը, այլ իրականը ցանկալիով փոխարինելու պատրանքը:

Արտաքին հասարակայնության մեջ երկի վերաբերյալ պատկերացումները հիմք են հանդիսանում երկի օբյեկտիվ կամ ընթացիկ իմիջի կառուցակցման համար: Ընդ որում՝ պետությունն ունի մի քանի օբյեկտիվ իմիջ՝ տնտեսական, սոցիալական, հումանիտար, քաղաքական, մշակութային, էկոլոգիական և այլն, որոնցից յուրաքանչյուրը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Ակնհայտ է, որ հայելային և ընթացիկ իմիջները կարող են չհամընկնել, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ հակասել մինյանց: Կարևոր է այդ տարբերությունները հաշվի առնել կառավարման գործառույթն իրականացնելիս:

Տեղեկատվության կառավարման գործնթացը ենթադրում է ոչ միայն առկա ինֆորմացիայի, կարծիքների, պատկերացումների ուսումնասիրություն, այլ նաև համապատասխան տեղեկատվական հոսքերի ձևավորում ու տարածում:

Ցանկացած օբյեկտի մասին սխալ տեղեկատվությունը, վերջինիս պակասը կամ բացակայությունը պարարտ հող է անվտահության, անտարբերության, անբարյացակամության մթնոլորտի ձևավորման համար:

Այս պարագայում իմիջի ձևավորմանն ուղղված տեղեկատվական արշավների նպատակը պետք է լինի նախ և առաջ համապատասխան իմիջի ներկայացումը: Այսինքն՝ երկրի դրական իմիջը համարժեք տպավորության արդյունք է:

Երկրի իմիջի ձևավորման աշխատանքները հաճախ ուղղված են լինում իրականի և ցանկալիի միջև որոշակի փոխազդան ապահովմանը՝ խթանելով հասարակության երևակայությունը և նրա մասնակցությունը երկրի իմիջի ձևավորմանը:

**Սողելավորվող կամ ցանկալի իմիջն** այն կերպարն է, որը փորձում են ստեղծել երկրի ղեկավարները պետության շահերի պաշտպանության նպատակով<sup>8</sup>:

<sup>8</sup> Տե՛ս Կաշլեվ ՅՕ., Գալումօվ Է. նշվ. աշխ., էջ 236-238:

Երկրի իմիջը, իրական պատկերի համեմատ, պարզեցված ձևով է մատնանշում այս կամ այն պետության յուրահատկությունը, նրա աշխարհառագմավարական առանձնահատկությունները: Բացի այդ, իմիջը կարելի է դիտել որպես ամփոփ տեղեկատվության տարատեսակ: Այսինքն՝ իմիջի միջոցով երկրի վերաբերյալ ինֆորմացիայի եական ծավալը հանգեցվում է սահմանափակ քանակությամբ նշանային խորհրդանշների խնբի: Երկրի իմիջը կոնկրետ է և անընդհատ ենթարկվում է ճշգրտման:

Ցանկացած երկրի հետ ծանոթանալիս կարող են առաջանալ հետևյալ հարցերը.

1. որտե՞ղ է գտնվում երկիրը,
2. ինչո՞վ է այն առանձնահատուկ,
3. ինչպիսի՞ն է ժողովուրդը, ինչպիսի՞ կենցաղավարման մշակույթով է ապրում բնակչությունը,

4. որո՞նք են գործունեության հիմնական ուղղությունները տվյալ երկրում,

5. ինչպիսի՞ նպատակներ, ձգտումներ ունի տվյալ երկիրը, զարգացման ի՞նչ ուղի է քռնել այն<sup>9</sup>:

Այս հարցերի պատասխանները թաքնված են երկրի ամբողջական իմիջի մեջ, ինչը կազմավորվում է վերոնշյալ բաղադրիչներից: Դրանք, անփոփելով և լրացնելով, կարելի է ներկայացնել հետևյալ վեց հիմնական բնութագրերի միջոցով.

1. **Աշխարհաբարձրական բնութագիրը** երկրի առաջավոր աշխարհագրական հատկանիշների, նշանների, խորհրդանշների խտացումն է բաղաքական հարաբերություններում: Այն զանգվածային գիտակցության մեջ նույնացնում է պետությունը աշխարհի որոշակի մասի հետ և դասում որոշակի պետությունների շարքը, դիտարկում այն դրամց շրջապատում (օրինակ՝ ԱՄՆ-ը՝ իբրև վայրի արևմուտք):

2. **Բնառեսուրսային բնութագիրը** ձևավորվում է բնական, լանդշաֆտային կամ էլ կլիմայական պայմանների և ազգային բնական ռեսուրսների առաջավոր ցուցանիշների խտացման հիման վրա: Այն նույնացնում է պետությունը որոշակի՝ միայն իրեն բնորոշ բնության խորհրդանշների հետ (օրինակ՝ Ռուսաստանը ծյան և ցրտի երկիր է, Շվեյցարիան՝ Ալպերի ադամանդը):

3. **Արտադրատնտեսական բնութագիրը** գիտական, արտադրական և նման այլ բնագավառներում երկրի առաջավոր տնտեսական խորհրդանշների, նշանների, հնարավորությունների խտացումն է: Միջազգային տնտեսական բաժանման պայմաններում այս կերպարի միջոցով երկիրը նույնացվում է որոշակի տնտեսական դիրքի հետ (օրինակ՝ ԱՄՆ-ը՝ դոլարի, կոկա-կոլայի և պեպսիի հետ, ճապոնիան՝ բարձր վիդեո, առլեիտ տեխնոլոգիաների հետ և այլն):

4. **Քաղաքակրթական-մշակութային բնութագիրը** պատմական և քաղաքակրթությունների հարթություննում ժողովրդի, երկրի ազգային մշակութային նշանների, խորհրդանշների և գեղերի խտացումն է: Այն նույնացնում է պետությունն ու նրա ժողովրդին միջազգային կարևորության պատ-

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 365:

մամշակութային ժառանգության հետ (օրինակ՝ Եգիպտոսն իր բուրգերի հետ):

5. *Սոցիոհոգեբանական բնութագիրը* հասարակության առաջավոր և յուրահատուկ սոցիոհոգեբանական ցուցանիշների, խորհրդանիշների, բնութագծերի խտացումն է, որը ժողովրդին նույնացնում է առավել բնորոշ, տիպիկ սոցիալ-հոգեբանական բնութագրիչների հետ (օրինակ՝ գերմանացիները ճշտապահ են, ճապոնացիներն ավանդապաշտ են և այլն):

6. *Ազգային-արժեքային բնութագիրն* ազգային-զաղափարական հարթությունում առաջավոր նշանների և խորհրդանիշների խտացումն է, որոնք արտացոլում են պետական շահերը, նպատակները և ձգտումները: Այս նույնացնումն է պետությունը և նրա ժողովրդին պատմական արժեքների հետ, որոնք առաջարկվում են աշխարհին և միջազգային բեմում պետության կողմից հետևողականորեն պաշտպանվում (օրինակ՝ ԱՄՆ-ում այդպիսի արժեքներ են ժողովրդավարությունն ու ազատությունը)<sup>10</sup>:

Երկրի դրական իմիջի ծևավորումը նպաստում է ազգային շահերի իրականացնանն ուղղված քայլերի արդյունավետության ապահովմանը: Ըստ էության, դրական իմիջը որոշակի երաշխիք է ֆինանսական ներդրումների և սոցիալական ծրագրերի իրականացնան, ինչպես նաև տուրիզմի զարգացնան, գիտատեխնիկական և միջնշակութային հաղորդակցման ապահովման և ռազմաքաղաքական գործընկերության զարգացնան համար:

Ու թեև երկրի բոլոր խնդիրները չեն կարող լուծվել միայն դրական իմիջի ծևավորման շնորհիվ, սակայն գլոբալիզացիայի պայմաններում, մշակույթների փոխներթափանցման դինամիկ զարգացող իրավիճակներում սոցիալական տարրեր խմբերի հետաքրքրությունների և կարծիքների միակցման գործընթացները ավելի մեծ նշանակություն են ստանում միջազգային հանրության կողմից տվյալ երկրի կերպարի դրական ընկալման համար:

Միաժամանակ անհրաժեշտ է հասկանալ, որ նման գործընթացները կարող են լինել արդյունավետ միայն այն դեպքում, եթե արտապետական, դիվանագիտական քայլերը զուգորդվեն ներքին հասարակայնության մեջ հայրենիքի հանդեպ նվիրվածության և վստահության նվազության մասնաւոր պահանջականության դրականացմամբ:

**ИВАРД МЕЛКОНИЯН – Основы конструирования имиджа страны.** – Статья посвящена одной из актуальных для современного мира проблем. Имидж страны, как определяет его Всемирная организация по туризму, – это совокупность эмоциональных и рациональных представлений, вытекающих из сопоставления всех признаков страны, собственного опыта и слухов, влияющих на создание определенного образа. Под влиянием перечисленных факторов при упоминании страны возникает целая цепь ассоциаций, относящихся к ней. Специальная работа в определенном направлении позволяет сформировать позитивный имидж страны в международном общественном мнении. Такой имидж – это важнейший инструмент, помогающий налаживать гармоничное международное сотрудничество.

<sup>10</sup> Տե՛ս Կաշլեվ ՅՈ., Գալումօվ Է. նշվ. աշխ., էջ 368:

ство в различных сферах (социальной, культурной, научно-технической, внешне-экономической, политической). В статье подробно рассматриваются различные факторы, воздействующие на формирование как внешнего имиджа страны, так и имиджа внутреннего – ее образа в глазах ее населения. Раскрывается роль и значение отдельных компонентов имиджа для приобретения конкурентных преимуществ. Показана необходимость учитывать экономические факторы в качестве детерминант инвестиционной привлекательности страны.

**NVARD MELKONYAN – *Basis of Forming the Image of the Country*.** – The article is devoted to the actual problems of forming the elements of the image of a state. The image of a state includes emotional and rational perceptions based on comparative approach to characteristics of a state, as well as personal experience and rumors, which influence the perception of a state image. In this sense the positive image of the state stimulates effective international affairs, including political, economic and cultural affairs, tourism, etc. Various factors which determine the formation of internal and external images of a state, including the perception of a state in the eyes of domestic audience as well as external community are shown in the article.